

Նոր ԾՐԱԳ

Հրատարակություն

Հ.Մ.Ը.Մ. Ալմեյո Մեկուսի շրջանի վարչություն

Եռամսեայ թերթիկ
Յունուար 2024
Ժ տարի . թիւ 1



Սիրելի ընթերցողներ՝,

Հ.Մ.Ը.Մ. Ալմեյո Մեկուսի Շրջանի ձեռք բերուած հարուստ պատմութեան մէջ 2024 Թ.ը , եւս կարճանագրէ միութեանս Նոր Ծրագի հրապարակման 10-րդ յոբելեանը:

Միութեանս իրականացուած միջոցառումները , արխիւացնելու « իբր պատմութիւն եւ ուղերձ գալիք սերունդներուն » եւ ցուցադրելու իր հետեւորդներուն Նեղրյանդական թագաւորութեան տարածքէն ներս եւ դուրս . Ծրագի խմբագրական կազմը նկատեց նման աշխատանքներու հրապարակման անհրաժեշտութիւնը :

6 Յունուար 2013 Թ.ին լոյս տեսաւ միութեանս առաջին եռամսեայ թերթիկը հայերէն տարբերակով . նաեւ 2013 Թ.ին փորձեր կատարուեցան միութեանս « Ծրագ » թերթիկը Հոլանդերէն եւ Հայերէն լեզուներով հրատարակելու աշխատանքները . երկ-լեզուներով հրատարակելու տարբերակը հրատարակուեցաւ ընդամենը միայն երկու թիւեր « որոնք էին 2013 Թ.ի Մարտ եւ Հոկտեմբեր »:


2013 Թ.է մինչեւ Յունուար 2016 Թ.ը արտահերթ պայմաններու պատճառով Ծրագ թերթիկի հրատարակութիւնները դադարեցան :

Յունուար 6 . 2016 Թ.ին վերահրատարակուեցաւ միութեանս թերթիկը «Նոր Ծրագ»ով իր նոր նմուշով եւ հայերէն տարբերակով . որն մինչեւ այսօր իր 10-րդ տարեշրջանին մէջ հերթական հրապարակուելու է:

Ծրագը եւ Նոր Ծրագը շարունակութիւնն է 1990 Թ.է սկսեալ Հ.Մ.Ը.Մ. Պաղտատ-ի տպագրուած ներքին լրատուին: Այսօր մեր Թերթիկը կատանայ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան գնահատանքները , քաջալերանքները եւ բարոյական աջակցութիւնը . ուր Հ.Մ.Ը.Մ. կայքէջի Լրատու դրուակին մէջ տեղադրուած էն միութեան հրապարակուած բոլոր թիւերը:

Միութեանս Ծրագով / նոր Ծրագով արդէն 2013 Թ. է սկսեալ իր քարոզչական առաքելութեան սկզբունքները տեղադրեց . ուր նախորդ տարիներուն շարունակ հրապարակեց միութեանս սկառուտական , մարզական եւ միութենական տարուած հայապահպանման միջոցառումները . ներկայ եղաւ համաշխարհային եւ ազգային աղետալի իրադարձութիւններուն եւ կորուստներուն նմանապէս ներկայ եղաւ արձանագրուած յաղթանակներու միջոցառումներուն . նոր- Ծրագը եղաւ ընդհանրապէս սփիւռքի եւ մասնաւորապէս Հոլանդայի մէջ դրական ոգին ներշնչող ասպարէզներէն մէկը :

Նոր Ծրագի խմբագրական կազմ՝
Եղբ. Մինաս Արսէնեան եւ Եղբ. Յարութիւն Պաղտատարեան





ՆՊԱՏԱԿԸ

(ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹԻԻ 429 ՄԱՐԶԻԿ-Ի)

Հայ կեանքի այս տխուր օրերուն, բոլորին ակնարկները դարձեալ ուղղուած են Հ.Մ.Ը.Մ.ին.- ի՞նչ կ'ընէ այս միութիւնը, ի՞նչպէս կ'ընէ, որ ամենուրեք կը յաջողի նոր սերունդ համախմբել, պատանիներ ու երիտասարդներ խանդավառել եւ այդ խանդավառութեամբ իր շրջապատին կենսունակութիւն պարզելու:

Պարզ է, որ հայ կեանքը լաւ օրերու մէջ չէ: Քիչ մը ամէն տեղ կը տիրէ հիասթափութիւն, անորոշութիւն եւ տեղ-տեղ նաեւ յուսահատութիւն՝ ի տես Արցախի կացութեան, Հայաստանի իրավիճակին եւ այս երկուքով պայմանաւորուած Սփիւռքի ներկային ու ապագային:

Պարզ է նաեւ, որ տնտեսական համաշխարհային տագնապը, քորոնայի համաճարակին առողջապահական-ընկերային ահաւոր հետեւանքները լուրջ մարտահրաւերներու դէմ յանդիման դրած են ամբողջ մարդկութիւնը եւ յատկապէս՝ նորահաս սերունդի դաստիարակութեամբ զբաղող պետական մարմինները, ոչ-կառավարական կազմակերպութիւնները, միութիւնները, կրթական հաստատութիւնները եւ քաղաքացիական ընկերութիւնները:

Այս բոլորով հանդերձ սակայն, աչքի՝ անցուցէք վերջին ամիսներու հայ կեանքի համայնապատկերը եւ շուտով պիտի նկատէք, որ մեծ ՆԵՐԿԱՅ մը կայ այնտեղ, երբ ուրիշներ մեծ բացակայ մըն են հոն: Ներկան Հ.Մ.Ը.Մ.ն է, որ տեղ մը կարգապահ շարքերով Վեհափառ Հայրապետ կը դիմաւորէ, այլ տեղ՝ շեփորախումբով ձեռնարկներ կ'առաջնորդէ: Մէկ այլ տեղ՝ աշակերտական մարզախաղեր կը կատարէ: Քիչ մը ամէն տեղ սկաուտական հաւաքոյթներ եւ մարզական մրցաշարքներ կ'իրականացնէ: Ընկերային հանդիպումներով ցիր ու ցան հայեր կը համախմբէ: Իսկ այս բոլորով, հսկայական ճիգով ու աշխատանքով, միութենական խանդավառութիւն եւ ազգային ոգեւորութիւն կը ստեղծէ:

Իր մթնոլորտը իբրեւ ամուր շաղախ ունենալով, Հ.Մ.Ը.Մ. մասնիկները իրարու կը միացնէ. Կիպրոսի մէջ աշխարհի չորս ծագերէն երիտասարդներ քով-քովի կը բերէ, իսկ Հայաստանի մէջ՝ սկաուտական մեծաթիւ բանակում կը կազմակերպէ: Բոլորին սիրտերը իրարու կը կապէ, կամքերը իրարու կը միացնէ: Անհատականութիւնները հաւաքականութեան կը վերածէ:

Անվերջ շարժում է Հ.Մ.Ը.Մ.ը: Կեանք եւ աշխուժութիւն սփռող, լաւատեսութիւն եւ նորութիւն ստեղծող: Ծարժում, որ օրուան 24 ժամերուն հանգիստ չի ճանչնար: Երբ տեղ մը խարուկահանդէս մը կամ խրախճանք մը իր աւարտին կը հասնի, այլ տեղ բանակումի մը առաւօտեան դրօշակի արարողութիւնը նոր կը սկսի, փոյտեանական մրցաշարքի մը սուլիչը նոր կը հնչէ:

Հայացնող շարժում է Հ.Մ.Ը.Մ.ը: Ով որ Հ.Մ.Ը.Մ.էն կ'անցնի հայ կը մնայ: Հ.Մ.Ը.Մ. հայ մարդուն կու տայ ինչ որ ամէնէն աւելի կը պակսի անոր՝ հպարտութեան զգացումը եւ յաղթանակի բերկրանքը: Հ.Մ.Ը.Մ. յաղթե՛լ կը սորվեցնէ հայուն:

Ի գուր չէ, որ հայ ժողովուրդի արժանաւոր մտաւորականներէն մէկը առիթով մը խոստովանած է, թէ այբուբենի գիրերէն ամէնէն աւելի սիրած է Հօ տառը, որովհետեւ անով կը սկսին Հայը, Հայկը, Հայաստանը, Հպարտութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ը: Իսկ գաղտնիքը այս բոլորին:

Գաղտնիքը միութեան մէջ եւ միութեան շուրջ եղող տեսական խանդավառութիւնն է, որ հայ մարդը կը կերպարանափոխէ, անոր գոյութեան եւ գոյատեւման ուժ կու տայ, հայ ըլլալու եւ հայ մնալու կորով կը ներշնչէ: Ժողովուրդը կը սիրէ խանդավառութիւնը: Կը սիրէ խանդավառութեան աղբիւր Հ.Մ.Ը.Մ.ը, կը վստահի եւ կը գուրգուրայ անոր, որովհետեւ լաւ գիտէ, որ Հ.Մ.Ը.Մ. սովորական սկաուտական շարժում մը չէ, մարզական ակումբ մը չէ: Հ.Մ.Ը.Մ. մարմինի, հոգիի եւ միտքի կրթութեան իւրայատուկ շարժում մըն է, որուն ալիքները հայ պատանին ու երիտասարդը կը պաշտպանեն շրջապատի տեսակաւոր վտանգներէն:

Գաղտնիքը միութեան նպատակին գիտակցութիւնն է եւ այդ նպատակին ծառայելու Հ.Մ.Ը.Մ.ականներու մնայուն պատրաստակամութիւնը: Նպատակ, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ հայութեան հզօրացումը զինք տկարացնել, ընկնել եւ պարտութեան մատնել փորձող ուժերուն դէմ.- կազմակերպական հզօրացում, տնտեսական հզօրացում, հոգիներու եւ միտքերու հզօրացում՝ չհամակերպելու համար պարտութեան եւ նահանջի բոլոր տեսակի երեւոյթներու:



Իսկ կա՞յ աւելի մեծ գաղտնիք՝ քան Հ.Մ.Ը.Մ.ի եւ հայութեան նպատակներուն միջեւ գոյություն ունեցող այս զուգորդութիւնը: Այն, որ երկուքն ալ բնական ձգտումը ունին յաղթական ազգ դառնալու, հզօր եւ անպարտելի հայրենիք ունենալու:


Ինչ որ մեր օրերու հիմնական պահանջն է:

Հրամայականն է:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ՄԱՐԶԻԿ»Ի



ԼՈՅՍ ՏԵՍԱԲ
ՄԱՐԶԻԿ
43-րդ տարի, Թիւ 430
Խմբագրական- Ի՞նչ ըսել, ի՞նչպէս ըսել...
ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ.
Գարլոս Սէֆերեանի կորուստը
Առաջին պատկերը եւ վերջինը- Խաչիկ Տէր
Ղուկասեան
Մեծ պայքարողը՝ եղբ. Գարլոս Սէֆերեան- Արրահամ
Ահարոնեան
Նկար մը եւ երեք կորուստ...- Վ. Աւագեան
ՀՄԸՄ-ի քարոզչական քատրերու պատրաստութեան
առցանց դասընթացքը իրագործուեցաւ
յաջողութեամբ
Ձեռքդ վա՛ր ՀՄԸՄ-էն- Մկրտիչ Մկրտիչեան
ՀՄԸՄ-ը ո՛չ մէկ ձեռով մեղաւոր...- Սերոբ Սահակեան
Խմբապետիս՝ եղբ. Ժիրայր Սարգիսեանի թանգարանը
- Յարութ Չէքիճեան
ՀՄԸՄ-ի Ամմանի ինքնաշարժով հետախուզական
արկածախնդրական մրցումը՝ «Ռէլի
փէյվորը»ը 1976-ին (Գ.)- Յարութ Չէքիճեան
Վկայութիւններ ՀՄԸՄ-ի ֆութպոլի փառաւոր
անցեալին (Դ.)- Ճորճիկ Ռաստկելեճեան
Թիւր կ'ընդգրկէ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքի
անդրադարձներ (Արցախ, Թիֆլիս,
Արեւմտեան Մ. Նահանգներ, Գանատա, Հարաւային
Ամերիկա, Շուէտ, Լիբանան,
Երուսաղէմ, Սուրիա): 48 էջ:





8 Հոկտեմբեր, 2023

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀՄԸՄ-Ի ՊԱՏԳԱՄԱՐՈՐԱԿԱՆ 13-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ**

ՀՄԸՄ-ի Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր Ժողովը տեղի ունեցաւ 2-7 Հոկտեմբեր 2023-ին, Հայաստան: Ժողովին մասնակցեցան միութեան Ծրջանային եւ Մեկուսի 30 շրջաններէ, 75 իրաւասու ձայնով պատգամաւորներ, ՀՅԴ Բիւրոյի անդամ Մկրտիչ Մկրտիչեան, Թեհրանի ՀՄԱԿ-ի ներկայացուցիչ Սոֆի Չաղարբէկեան, Համազգայինի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Արտաշէս Շահպազեան եւ խորհրդակցական ձայնով 28 հրաւիրեալներ, ընդամենը՝ 103 մասնակիցներ: Ժողովին բացման ներկայ գտնուեցաւ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան: Ժողովը իր տեսակին մէջ իւրայատուկ էր, որովհետեւ կը գումարուէր ներազգային ծանր պայմաններու մէջ:

Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը մանրամասն քննութեան ենթարկեց 2019-2023 քառամեակի ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան գործունէութիւնը, յոյժ գնահատելի նկատեց կատարուած աշխատանքները եւ ապագայի հաշուոյն մշակեց նոր ծրագիրներ: Ժողովը լայնօրէն անդրադարձաւ ՀՄԸՄ-ի սկաւառութիւնը, մարզական կեանքը եւ երիտասարդութիւնը յուզող հրատապ հարցերուն եւ համապատասխան որոշումներով քայլեր առաջադրեց անոնց թափ տալու նպատակով: Արժարձուեցան նաեւ միութեան քարոզչութեան, արդի արհեստագիտութեան եւ ռազմավարական ծրագիրներու կապուած հարցեր:

Ժողովը ընդհանուր արժեւորումը կատարեց միութեան կազմակերպական ընդհանուր իրավիճակին եւ ընդգծեց ՀՄԸՄ-ՀԱՄԿ-ի եւ միութեան աշխարհասփիւռ մասնաճիւղերուն աշխատանքային դաշտերը ընդլայնելու կարելիութիւնները:

Ժողովը յատուկ օրակարգով կանգ առաւ Արցախի եւ Արցախի հայութեան կացութեան դիմաց: Ժողովը հաստատեց, որ դէմ յանդիման կը գտնուինք Արցախի ժամանակաւոր կորուստի իրականութեան դիմաց, հետեւաբար Ժողովը ՀՄԸՄ-ի պարտքն ու պարտաւորութիւնը նկատեց տէր կանգնիլ եւ պահպանել Արցախի Հանրապետութեան խորհրդանիշները՝ դրօշը, քայլերգն ու զինանշանը, այդ խորհրդանիշներուն ընդմէջէն նոր սերունդին մօտ վառ պահելու համար Արցախի վերատիրացման խորհուրդը:

Իբրեւ Արցախէն տեղահանուածներուն անմիջական աջակցութեան քայլ, Ընդհանուր Ժողովը յառաջացուց «ՀՄԸՄ Արցախ Հիմնադրամ»ը, որ պիտի օժանդակէ Արցախէն տեղահանուած հայրենակիցներու անյետաձգելի կարիքներուն:

Իր հնգօրեայ աշխատանքներուն աւարտին, Ընդհանուր Ժողովը 2023-2027 քառամեակի ՀՄԸՄ-ի նոր Կեդրոնական Վարչութիւնը ընտրեց հետեւեալ կազմով.-

- Եղբ. Յակոբ Խաչերեան (Լիբանան)
- Եղբ. Վիգէն Աւագեան (Լիբանան)
- Քոյր Թային Օրտոդլեան (Լիբանան)
- Եղբ. Աւետիս Տէրվիչեան (Սուրիա)
- Քոյր Սանտրա Վարդանեան (Հայաստան)
- Եղբ. Հրաչ Միսեռեան (Ֆրանսա)
- Եղբ. Ֆէոդի Խաժակ Գազանճեան (Շուէտ)
- Եղբ. Վահէ Թանաշեան (Արեւելեան Մ.Ն.)
- Եղբ. Մհեր Դաւիթեան (Արեւմտեան Մ.Ն.)
- Եղբ. Վիգէն Աբելեան (Արեւմտեան Մ.Ն.)
- Քոյր Լիոնի Սարմազեան (Գանատա)
- Քոյր Սեսիլիա Տաղեան (Հարաւային Ամերիկա)
- Եղբ. Տիրան Վահրատեան (Աւստրալիա)



7 Հոկտեմբեր, 2023
ԴԻԲՆ
Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏԳԱՄԱՐՈՐԱԿԱՆ
13-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ



22 Հոկտեմբեր 2023

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՑԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ

2-7 Հոկտեմբեր 2023-ին Հայաստանի մէջ գումարուած Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր Ժողովը, իր ընկալեալ օրակարգին կողքին, կարեւորութեամբ քննեց Արցախը Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն մէջ մնայուն ներկայութիւն դարձնելու հրամայականը եւ որոշեց.-

Ա. ՊԱՀՊԱՆԵԼ ԱՐՑԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՅՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ
Հ.Մ.Ը.Մ. ազգային արժէքներու եւ խորհրդանիշներու աւանդապահ միութիւն է: Եռագոյն դրօշը, 1918-ի Հանրապետութեան զինանշանը, քայլերգը եւ անկախութեան խորհուրդը ան պահպանած է 70 տարի, երբ Հայաստան կորսնցուցած է իր անկախութիւնը: Այսօր, երբ դեմ յանդիման կը գտնուինք Արցախի Հանրապետութեան կորուստի իրականութեան դիմաց, Հ.Մ.Ը.Մ. իր պարտքն ու պարտաւորութիւնը կը նկատէ տէր կանգնիլ ու պահպանել Արցախի Հանրապետութեան խորհրդանիշները, այդ խորհրդանիշներու ընդմէջէն վառ պահելու համար Արցախի վերատիրացման խորհուրդը: Առ այդ, Պատգամաւորական Ժողովը առաջադրեց՝

- 1) Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր ակումբներուն մէջ այսուհետեւ Եռագոյնի կողքին պատուել Արցախի Հանրապետութեան դրօշը:
- 2) Հ.Մ.Ը.Մ.ի հրապարակային թէ ներքին բոլոր հանդիսութիւններուն, սկաուտական հաւաքներուն եւ մարզական հանդիպումներուն ծածանել նաեւ Արցախի դրօշը:
- 3) Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ մարզական խումբերը եւ սկաուտական միաւորները իրենց տարազներուն վրայ կրեն Արցախը խորհրդանշող պէճեր:
- 4) Հ.Մ.Ը.Մ.ի դաստիարակչական-քարոզչական ծրագիրներուն մէջ հիմնական եւ մնայուն տեղ տրամադրել Արցախին:

Բ. ՀԱՍՏԱՏԵԼ «Հ.Մ.Ը.Մ. ԱՐՑԱԽ ՀԻՄՆԱԴԻՐԱՄ»Ը
«Հ.Մ.Ը.Մ. Արցախի հիմնադրամ»ը պիտի հոգայ Արցախէն բռնի տեղահանուած ընտանիքներու կենցաղային անմիջական կարիքները:
Հիմնադրամին եկամուտները պիտի գոյանան.-
- Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու եւ շրջաններու տարեկան հասութեաբեր ձեռնարկներու եկամուտներու որոշ տոկոսէն փոխանցուած գումարներէն: - Հ.Մ.Ը.Մ.ականներու անդամատուրքերուն վրայ այս նպատակին համար կատարուած յաւելումներէն:
- Հ.Մ.Ը.Մ.ի համակիր շրջանակին մօտ կատարուելիք ժողովրդային հանգանականութիւններէն:

Գ. ՄՇԱԿԵԼ ԱՐՑԱԽԷՆ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒՄՓ ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ
Հ.Մ.Ը.Մ. յատուկ ուշադրութեան պիտի արժանացնէ Արցախէն բռնի տեղահանուած ընտանիքներու փոքրիկները, անոնց համար մշակելով դաստիարակչական-սկաուտական յատուկ ծրագիրներ, ինչպէս միութիւնը իր հիմնադրութեան օրերուն կատարած էր Արեւմտահայաստանէն Պոլիս ապաստանած գաղթականներու զաւակներուն եւ որբերուն:

Հ.Մ.Ը.Մ.Ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ





16 Հոկտեմբեր 2023

**ՔՈՅՐ ՄԱՐՕ ՔԷՇԻՇԵԱՆ ԵՒ ԵՂԲ. ԾԱՀԷ
ԵՆԻԳՈՄՇԵԱՆ
ԿՎՐԺԱՆԱՆԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՐԺԱՆԵԱՑ»
ՇՔԱՆՇԱՆԻՆ**

Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական 13-րդ
Ընդհանուր Ժողովի աշխատանքներուն առթնթեր,
Չորեքշաբթի, 4 Հոկտեմբեր 2023-ի կեսօրին, Հ.Մ.Ը.Մ.Ի
Կեդրոնական Վարչութիւնը պարգեւատրեց
վաստակաշատ երկու միութենական:

Սկզբունքով, պարգեւատրումը տեղի պիտի
ունենար Պատգամաւորական Ժողովի բացման
հրապարակային պաշտօնական հանդիսութեան
ընթացքին, սակայն պայմաններու բերումով, բացման
հանդիսութեան ջնջումէն ետք, կատարուեցաւ ներքին
հանդիպումով մը, Պատգամաւորական Ժողովի
մասնակիցներու ներկայութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ական իրենց երկարամեայ վաստակին
եւ անմնացորդ նուիրումին համար, միութեան
բարձրագոյն «Արժանեաց» շքանշանին արժանացան
Արեւմտեան Ս. Նահանգներու շրջանէն քոյր Մարօ
Քէշիշեան եւ եղբ. Ծահէ Ենիգոմշեան: Այս առիթով
խօսք առաւ եւ վաստակաւորները պարգեւատրեց
Հ.Մ.Ը.Մ.ի ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան
ատենապետ եղբ. Վաչէ Նանարեան:

Սրտի խօսքեր արտասանեցին
պարգեւատրեալները: Քոյր Մարօ Քէշիշեան եւ եղբ.
Ծահէ Ենիգոմշեան իրենց երախտապարտութիւնը
յայտնեցին Հ.Մ.Ը.Մ.ին եւ շեշտեցին, որ կեանքի մէջ
շատ բան սորված են այս մեծ միութենէն, որուն
անդամակցելու եւ ծառայելու պատիւը ունեցած են:

Աւարտին, պարգեւատրեալները ընդունեցին
ներկաներու շնորհաւորութիւնները:

(Ձեռնարկին մանրամասնութիւնները եւ
մեծարեալներուն կենսագրական գիծերը շուտով լոյս կը
տեսնեն «Մարզիկ» պաշտօնաթերթի յատուկ թիւով):





7 Նոյեմբեր 2023

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ը Ի ՍՊԱՍ ԱՐՑԱԽԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Արցախեան ցաւալի իրադարձութիւններէն ետք, Արցախի բնակիչներուն բռնի տեղահանութեան առաջին իսկ ժամերէն, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան որոշումով եւ անդամներու աշխոյժ մասնակցութեամբ, Հ.Մ.Ը.Մ. լծուեցաւ մեր հայրենակիցներու անմիջական պահանջներու՝ տաք հագուստի եւ մաքրութեան իրերու հաւաքման եւ տրամադրման գործին: Սկսաւ արցախցիներու մեծ հոսք դէպի Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի գրասենեակ, ուր անոնք ստացան տաք հագուստ, անկողնային պարագաներ եւ մաքրութեան իրեր:

Հաւաքուեցան շուրջ 450 քնտանիքներու տուեալներ, ինչ որ հետագային փոխանցուեցաւ Արցախի օժանդակութիւնը համակարգող յանձնախումբին:

Հայաստանի Հայ Օգնութեան Միութեան՝ ՀՕՄ-ի Ծրջանային Վարչութեան հետ, 29 Սեպտեմբերին, շուրջ 100 արկղ ապրանք տեղափոխեցաւ Գորիս, որ այդ օրերուն տեղահանուած հայրենակիցներու առաջին հանգրուանն էր:

Միաժամանակ աշխատանքներ սկսան Արցախի Մեկուսի շրջանէն տեղահանուած քոյրերու եւ եղբայրներու հետ կապեր հաստատելու, իրենց կարիքները ճշդելու եւ ըստ կարելիութեան օժանդակելու համար:

Աշխատանքը աւելի լայն թափ ստացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր Ժողովին ընդունուած բանաձեւերու լոյսին տակ: Այս առիթով հիմնուած «Հ.Մ.Ը.Մ. Արցախ Հիմնադրամ»-ի նպատակներէն մեկնելով, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Արցախի Մեկուսի շրջանի աստիճանաւորներու հետ աշխատանքային հանդիպում:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ քոյր Սանտրա Վարդանեանի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան եւ Արցախի Մեկուսի շրջանի վարչութեան միացեալ նիստ, ուր քննարկուեցան յառաջիկայի միացեալ աշխատանքները եւ ծրագիրները:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութիւնը փոխանցեց, որ Արցախի Մեկուսի շրջանի վարչութեան կը տրամադրէ գրասենեակային կահաւորումով սենեակ մը իր կեդրոնին մէջ:

Իսկ 29 Հոկտեմբերին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Խմբապետական Խորհուրդին նախաձեռնութեամբ, Բիւրականի «Գառնիկ Մկրտիչեան» բանակավայրին մէջ տեղի ունեցաւ 150 հոգինոց միացեալ գործունէութիւն, որուն նպատակն էր Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի եւ Արցախի Մեկուսի շրջանի սկաուտներու միասնական աշխատանքը, մտերիմ մթնոլորտի մէջ, Արցախի սկաուտներուն համար ջերմ եւ հարազատ մթնոլորտի ապահովում, ինչ որ իրականացաւ «Հ.Մ.Ը.Մ. Արցախ Հիմնադրամ»-ի միջոցներով:





ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԱՆՐԱՀԱԲԵՐԻՆ

Հ.Մ.Ը.Մ. Ալմեյո Մեկուսի Ծրչանի անդամները եւ խումբ մը սկաուտներ. 1 Հոկտեմբեր 2023 Թ.ին . մաս կազմեցին Պելնիբա Պրուսել քաղաքին մէջ կազմակերպուած Համաեւրոպական հանրահաւաքին , ի աջակցութիւն Արցախի Հանրապետութեան եւ Արցախի Հայութեան :



Խաչքարի Օծման արարողութիւն

Կիրակի , 22 Հոկտեմբեր 2023Թ.ին Հ.Մ.Ը.Մ. Ալմեյո-ի Ատենապետ Երբ. Մասիս Վահանեան եւ միութեանս ներկայացուցիչ Երբ. Սեւան Կորկիսեանը , մասնակցեցան Ամստերդամի Ս.Հոգի եկեղեցւոյ մէջ տեղադրուած խաչքարի օծման արարողութեան :

Տեղադրուած խաչքարը նուիրուած է հայասրբացած նահատակներու յիշատակին :





Հ.Մ.Ը.Մ. Ալմելո-ի մասնակցությունը Հ.Մ.Ը.Մ. –ի Պատգամաւորական 13-րդ ընդհանուր ժողովին

Հ.Մ.Ը.Մ. –ի Պատգամաւորական 13-րդ ընդհանուր ժողովին « որը տեղի ունեցաւ 2-7 Հոկտեմբեր 2023 թ.ին Հայաստանին մէջ» , մասնակցեցան միութեանս կողմէ երկու պատգամաւորներ « Եղբ. Մասիս Վահանեան / միութեանս ատենապետ եւ Եղբ. Սեւան Կորկիսեան / միութեանս ժողովի կողմէ ընտրուած թեկնածու»:



ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հ.Մ.Ը.Մ. Ալմելո –ի վարչությունը , 21 Նոյեմբեր 2023 թ.ին միութեանս սրահէն ներս հանդիպում ունեցաւ Հոլանդական խորհրդարանի ընտրություններու թեկնածու Իսա Գահրամանի հետ:





Հ.Մ.Ը.Մ. Ալմելո Մեկուսի Շրջանի 25-րդ մարզահանդես . նուիրում Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 105-րդ ամեակին:

Հ.Մ.Ը.Մ.Ալմելո մեկուսի շրջանի կազմակերպութեամբ , Ալմելո-ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Մաշտոց քահանայ Պաղտասարեանի հոգեւորութեամբ , Նեղերլանդներու թագաւորութեան Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս Մարիամ Վիրաբեանի , Յ.Հ.Դ. Արամ Սանուկեան Կոմիտէութեան , Ալմելո-ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ վարչութեան , Հ.Օ.Մ. «Շուշ մասնաճիւղ»ի , Յ.Հ.Դ. «Գարեգին Նժդէհ» երիտասարդական միութեան , Հոլանտայի Հ.Բ.Ը.Մ. ան , Կիլիկիա միութեան , Երեւան միութեան , Անի միութեան , Գերմանիոյ Հ.Մ.Ը.Մ. Միունիսի , Հ.Մ.Ը.Մ. Ալքմաշի , Հ.Մ.Ը.Մ. Առնհեմի ներկայացուցիչներու , միութեանս եւ մասնակից միութիւններու մարզական խմբերու մասնակցութեամբ եւ սկաուտական ներկայութեամբ. Շաբաթ 18 Նոյեմբեր 2023 Թ.ին Ալմելո քաղաքին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 105-րդ ամեակին նուիրում Հ.Մ.Ը.Մ. Ալմելո Մեկուսի Շրջանի 25-րդ մարզահանդէս :

Մարզահանդէսը սկիզբ առնելէ առաջ, հրաւիրուեցաւ ներկաներուն մէկ վայրկեան յոտնկայս յարգանքի տուրք մատուցանելու մեր բոլոր նահատակներուն:

Օրուայ մարզահանդէսի յայտագիրը սկիզբ արաւ սկաուտական դրօշակ բարձրացնող խմբի շքեղ տողանցքով . տողանցքի աւարտին տեղի ունեցաւ դրօշակներու բարձրացման արարողութիւնները ուր հերթական բարձրացուեցան պետական օրհներգերով Նեղրլանտական թագաւորութեան , Հայաստանի Հանրապետութեան , Արցախի Հանրապետութեան եւ ի վերջոյ Յառաջ Նահատակով Հ.Մ.Ը.Մ. ի դրօշակները:

Դրօշակներու բարձրացման արարողութիւններու աւարտին , ըստ միութեանս աւանդական սովորութեան դաշտ հրաւիրուեցաւ Ալմելո-ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Մաշտոց քահանայ Պաղտասարեանը Տէրունական աղօթքով եւ իր հայրապետական պատգամը փոխանցելու ներկաներուն:

Հոգեւոր հովիւի օրհնութիւնէ ետք դաշտ հրաւիրուեցաւ Նեղերլանդներու թագաւորութեան Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս Մարիամ Վիրաբեանը ղեսպանատան ուղերձը փոխանցելու « Հիւպատոսը նշեց . հայ ազգը կը կիսուի բոլոր ազգերու հետ այսօրուայ տիրող համաշխարհային դժուար պայմանները եւ հայապահպանման մարտահրատերները դժուարութիւնները սկսուել է . բայց այսօր հոս նման հաւաքոյթով գնահատելի եւ շօշափելի է Հ.Մ.Ը.Մ. Ալմելո-ի տարած դերը նման մարտահրաւերը հաղիարելու համար : Ապրէք եւ շարունակէք ձեր կրած առաքելութիւնը»:





Հիւպատոսի խօսքի աւարտին դաշտ հրաւիրուեցաւ միութեանս ատենապետ Երբ. Մասիս Վահանեանը , միութեանս վարչութեան խօսքը փոխանցելու: Երբ. Վահանեանը ներկաներուն ողջունելէ ետք նշեց « Հայ կեանքի այս տխուր օրերուն , երբ Արցախը կը հայաթափի , պարզ է որ հայի կեանքը լաւ օրերու մէջ չէ: Ամէն տեղ կտիրէ հիասթափութիւն , անորոշութիւն եւ տեղ մը նաեւ յուսահատութիւն . ի տես Արցախի եւ Հայաստանի իրավիճակին եւ այս երկուքով պայմանաւորուած սփիռքի ներկայ եւ ապագան:» շարունակելով « Փորձութիւններով լեցուն այս ժամանակները կը պահանջեն որ ամէն հայ իր հայրենիքին հանդէպ իր դիրքը ճշդէ :Մեր ազգի երագներու փարսած մնալու ու մեր գեղին պատիւն եւ իրաւունքները պաշտպանելու յանձնարարութեամբ նայինք մեր նահանջներուն օրինակին . որպէսզի նոր արշալոյս ծագի հայութեան կեանքին մէջ եւ հայ ժողովուրդը իր քայլերը ուղղէ դէպի նոր բարձունքներ ու հասնի իր անկատար տենչերուն ու երագներուն»:

Երբ.Ատենապետը իր խօսքին մէջ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ. հիմնադրութեան 105-րդ տարելիցին « Միրելի ներկաներ այսօր մենք համախմբուած ենք նշելու Հ.Մ.Ը.Մ.ի 105 ամեակը եւ Հ.Մ.Ը.Մ. Այնթո-ի տարեկան 25-րդ մարզահանդէպ:Մարտափի ու համաշխարհային առաջին պատերազմի արհաւիրքներուն մէջ ծնունդ առած այս միությունը իր գոյութեան ընթացքին հայ մանուկին , պատանի-ին եւ երիտասարդին սովորեցուց հայրենիքէն հեռու ըլլալով հանդերձ հայրենիք սիրել , հայօրէն ապրիլ եւ գոյատեւել: 105 տարիներ շարունակ Հ.Մ.Ը.Մ.ը ֆիզիկական , իմացական եւ բարոյական դաստիարակութեամբ բարձր պահեց Եռագոյնը , տէր կանգնեցաւ հայասպահանման եւ հայակերտման գործընթացքն եւ իր 111-է աւելի մասնաճիւղերով ծառայութեան դաշտը ընդարձակեց:»

Շարունակելով « Հ.Մ.Ը.Մ.ի 105 տարուան հրաշքը գլխաւորապէս կը պարտի մեր ժողովուրդին.որ վստահած է այս միութեան ` հաւատարմով որ ան եղած է ու կը մնայ մեր մատողաշ սերունդի առողջ միջավայրը . սերունդներ կերտելու հայրենիքէն հեռու բայց հայրենիքի շունչով , մարզական առողջ միջավայրին մէջ. Սկստուտական ազնիւ սկզբունքներով իբրեւ համագաղութային եւ համահայկական մէկ մեծ ընտանիքի անդամներ: Հ.Մ.Ը.Մ.ը իր հաւատարմիւ առաքելութիւնը կշարունակէ իր երթն ու գործունէութիւնը . հակառակ տիրող ծանր պայմաններուն , իբրեւ նպատակ ունենալով կերտել տիպար հայ քաղաքացիներ . որոնք գիտակից են իրենց կոչումին ու պարտականութիւններուն:»

Երբ. Վահանեանը փակեց իր ուղերձը ըսելով « Միրելի մարզիկներ եւ սկստուներ քարեզէ՛ք վճռական ու հաստատաբայլ, քարեզէ՛ք հայութիւնը ունենալով ձեր աչքին առաջ ու հոգիներու խորը . թող ձեր երթը ըլլայ յաղթանակ մինչեւ հայ ժողովուրդի ամբողջական յաղթանակին . ազատ անկախ եւ միացեալ հայաստանի կերտումը:»





Ատենապետի խօսքը աւարտելէ ետք . շքեղ տողանցքով մարզադաշտ մուտք գործեցին օրուայ մարզահանդէսի մասնակից սկաուտական եւ մարզական մասնակիցները «օրուայ մարզահանդէսին մաս կազմեցին նաեւ Հ.Մ.Ը.Մ. Առնհեմի սկաուտները»:

Խումբերը մարզադաշտի մէջ կեդրոնանալէ ետք տեղի ունեցաւ սկաուտական աստիճաններու եւ պաշտօններու բաշխում:

Տողանցքի աւարտին սկսուեցաւ սրահի ոտնագնդակի մրցաշարը: Մրահի ոտնագնդակի մրցաշարի կողքին տեղի ունեցաւ նաեւ սեղանի թէինիս մրցաշար . ուր մասնակցել էին 6 մարզիկներ : Մրցաշարի եզրափակիչ մրցումը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ. Առնհեմի Եղբ. Արթուր Դիֆոնեանի եւ Հ.Մ.Ը.Մ. Ալմելօ-ի Եղբ. Արարատ Օհանէսեանի միջեւ. Մրցաշարը աւարտուեցաւ Հ.Մ.Ը.Մ. Ալմելօ-ի Եղբ. Արարատ Օհանէսեանի առաջնութեամբ :

Մեղայներու եւ բաժակներու բաշխումը տեղի ունեցաւ միութեանս «Վրէժ Չաթալեան» սրահին մէջ. ուր պարգեւատրուեցան մարզահանդէսի մասնակցող բոլոր մարզիկները եւ յուշանուէրներ տրուեցան մասնակցող միութիւններու ներկայացուցիչներուն:

Մարզահանդէսը աւարտուեցաւ խրախճանքով , ուր հնչուեցաւ հայրենասիրական եւ ազգային երգերը . օրուայ խրախճանքը վարող միութեանս սիրուած Մուրէն Աճեմեան երգիչն էր:

Անհրաժեշտ է յիշել միութեանս ընկերային , տիկնաց , մարզական , սկաուտական եւ օժանդակ յանձնախումբերու պատրաստական գնահատելի աշխատանքները:

Մինչ յաջորդ հանդիպումին՝
Կեցցէ Հ.Մ.Ը.Մ. ը Կեցցէ Հայ ազգը:
Հ.Մ.Ը.Մ. Ալմելօ-ի վարչութիւն





Փոքրիկներու սրահի ոտնագնդակի մրցաշար

26 Հոկտեմբեր 2023 Թ.ին տեղի ունեցաւ միութեանս սրահին մէջ փոքրիկներու սրահի ոտնագնդակի մրցաշար:





Georganiseerd door de sportcommissie van Homenetmen Almelo

KINDERVOETBAL

JONGENS & MEISJES 6 t/m 13 jaar

26-10-2023 **19:30 UUR**

**HOMENETMEN ALMELO (VREJ CHATALIAN ZAAL)
BURGEMEESTER SCHNEIDERSINGEL 21, 7602 RK**

MELD JE AAN VIA 0619000833 !



Georganiseerd door de sportcommissie van Homenetmen Almelo

VOLLEYBAL

JONGENS & MEISJES

19-10-2023 **19:30 UUR**

**HOMENETMEN ALMELO (VREJ CHATALIAN ZAAL)
BURGEMEESTER SCHNEIDERSINGEL 21, 7602 RK**

MELD JE AAN VIA 0619000833 !

Սրահի ոտնագնդակի մրցաշար

2022-23 Թ.ի Տարեշրջանի վերջին եռամսեայ KNVB ֆութբալի շրջանային մրցաշարերու արդիւնքները .-

Հ.Ս.Ը.Ս. 2 (Homentmen 2) Կը մրցակցի 4րդ բաժանում աստիճանի խումբերու հետ

1 Դեկտեմբեր 2023
EBZV`85 5 3 - 4 Homenetmen Almelo 2





6 Դեկտեմբեր 2023

ՎԿԱՅԵԼ ԿԱՐԳ

Հ.Մ.Ը.Մ Ալմելո մեկուսի շրջանի իմրապետական կազմեն , քոյր Մարիամ Մխիթարեան եւ քոյր Դանիա Ադոմեան յաջողութեամբ աւարտեցին Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական Վկայել կարգի դասընթացքները եւ արժանացան կարգի աստղը եւ վկայագիրը:



Զմրան պապի այցելութիւն

Սկաուտական իմրապետական կազմի կազմակերպութեամբ Ծաբաթ 16 Դեկտեմբեր 2023 թ-ին միութեանս սրահին մեջ կաղանդի առթիւ . տեղի ունեցաւ սկաուտական հաւաք :Օրուայ հաւաքին կաղանդի երգերով Զմրան պապը այցելեց միութեանս սկաուտներուն :

Միութեանս սկաուտներու Կաղանդի օրը աւարտուեցաւ հաճելի մթնոլորտ ժամանելով:





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- ⇒ ՄԵՐ ԽՕՍՔԸ.
- ⇒ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹԻՒ 429 ՄԱՐԶԻԿ-Ի.
- ⇒ ԼՈՅՍ ՏԵՍԱԲ ՄԱՐԶԻԿ «43-րդ տարի, թիւ 430».
- ⇒ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՀՄԸՄ-Ի ՊԱՏԳԱՄԱԲՈՐԱԿԱՆ 13-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ.
- ⇒ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՅԱԽԸ ՄՆԱՅՈՒՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ .
- ⇒ ՔՈՅՐ ՄԱՐՕ ՔԷՇԻՇԵԱՆ ԵՒ ԵՂԲ. ՇԱՀԷ ԵՆԻԳՈՍՇԵԱՆ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՐԺԱՆԵԱՅ» ՇՔԱՆՇԱՆԻՆ.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ը Ի ՄՊԱՍ ԱՐՅԱԽԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ .
- ⇒ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆ ՀԱՆՐԱՀԱԲԱՔԻՆ .
- ⇒ ԽԱԶՔԱՐԻ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ .
- ⇒ Հ.Մ.Ը.Մ. ԱԼՄԵԼՕ-Ի ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՊԱՏԳԱՄԱԲՈՐԱԿԱՆ 13-ՐԴ ԸՆԴ. ԺՈՂՈՎԻՆ.
- ⇒ ՀԱՆԴԻՊՈՒՄ.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ. ԱԼՄԵԼՕ ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆԻ 25-րդ ՄԱՐԶԱՀԱՆԴԷՍ.
- ⇒ ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ՄՐՅԱՇԱՐ.
- ⇒ ՄՐԱՀԻ ՈՏՆԱԳՆԴԱԿԻ ՄՐՅԱՇԱՐ.
- ⇒ ՎԿԱՅԵԼ ԿԱՐԳ.
- ⇒ ՉՄՐԱՆ ՊԱՊԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ.
- ⇒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասցե : Burgemeester Schneiderssingel 21 , 7602 RK - Almelo
 Կայք էջ . Website : homenetmenalmelo@yahoo.nl
 Facebook : Homenetmen Almelo / ՀՄԸՄ Ալմելո
 Instagram : homenetmenalmelo

Առաջարկներու համար կը խնդրուի կապ հաստատել (homenetmenalmelo@yahoo.nl) -ով